ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

քաղաք Հրազդան *10 ՀՈՒՆԻՍԻ 2024թ.*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Աշոտ Ասրյանը, Անդրանիկ Բաբայանը, Թեհմինե Բադալյանը, Գևորգ Գյուրջյանը, Լևոն Գրիգորյանը, Գևորգ Դավթյանը, Գոհար Հակոբյանը, Արա Հարությունյանը, Սամսոն Հարությունյանը, Գինեվան Ղազարյանը, Խաչիկ Մուրադյանը, Արտեմ Ստեփանյանը, Մերի Տոնոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գուրգեն Հակոբյան, Արևիկ Եփրեմյան, Գեղամ Հակոբյան, Գարիկ Հակոբյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սևակ Միքայելյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռոբերտ Դանիելյանը

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 07 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 10-ի N 07 նիստի օրակարգը.
1) Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 21-ի N 203 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 14-ի N 58 և 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 195 որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
3) Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 196 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
4) Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 197 որոշման

մեջ փոփոխություն կատարելու մասին
5) Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 198 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
6) Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 14-ի N 102 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N 166 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
8) ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ գյուղի Պերճ Բաղալյանի անվան մշակույթի տուն համայնքային ոչ առևտրային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Լեռնանիստի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտերը հաստատելու մասին
9) Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքերը օտարելու մասին
10) Մելանյա Կոլյայի Պետրոսյանին պատկանող խանութ-տաղավարի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
11) Արտակ Արամի Վարդանյանին պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
12) Արայիկ Աղվանի Մինասյանին և Հերմինե Ռուբիկի Միքայելյանին պատկանող ավտոտնակի պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
13) Կադաստրային քարտեզում հայտնաբերված անճշտության ուղղում կատարելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին
14) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 3.43992 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության և ոչ մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
15) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը ոչ մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
16) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասն ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարելու մասին
17) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
18) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին
19) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 215-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
20) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի 6-րդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 203 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

1.Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 21-ի «Հրազդան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» N 203 որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետում «Մաթևոսյան Մոնթե» բառերը փոխարինել «Դավթյան Գևորգ» բառերով»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 58 ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 195 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով.

1.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 195 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1 հավելվածի: 2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2016թվականի հուլիսի 14-ի «Հրազդանի համայնքապետարանի ենթակայության «Աղբահանություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկի հաստիքացուցակը պաշտոնային դրույաքաչափերը և կանոնադրությունը հաստատելու մասին» N 58 որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի: 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունիսի 16-ից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 196 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 196 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունիսի 16-ից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի N 197 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33 –րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1.Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հրազդանի համայնքապետարանի Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 197 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունիսի 16-ից :

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի N 198 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդանի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների,հուշարձանների պահպանման և շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2023 թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին N 198 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի: 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունիսի 16-ից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 102 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 14-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին» N 102 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 166 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 13-ի «ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ գյուղի Պերճ Բադալյանի անվան մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության, «ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտերը հաստատելու մասին» N 166 որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93/

Լսեցին

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ԳՅՈՒՂԻ ՊԵՐՃ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-66-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 42-րդ կետերով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 05-ի N 71 որոշումը.

1. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ գյուղի Պերճ Բադալյանի անվան մշակույթի տուն համայնքային ոչ առևտրային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Լեռնանիստի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտերը համաձայն N 1 և N 2 հավելվածների:
2. Միացման ձևով վերակազմակերպվող ընկերության գործունեության դադարման պետական գրանցումից հետո, մեկամսյա ժամկետում Հրազդան համայնքի ավագանու կողմից հաստատված փոխանցման ակտի համաձայն՝ «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն ընդունում է, իսկ միացող ընկերությունները հանձնում են առկա հիմնական և շրջանառու միջոցները, դրամական մնացորդները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները:
3. Հանձնում-ընդունումը կատարվում է համապատասխան ակտի միջոցով, որն ստորագրվում է կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Մարինե Սոսայի Գրիգորյանի լիազոր անձ՝ Սոնյա Արմենի Արզումանյանի 2024 թվականի մարտի 29-ի № 2699 դիմումը.

1. Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասի 97 շենքի 15,5 քառակուսի մետր մակերեսով № 64 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ № 17042024-07-0185, տրված՝ 17 ապրիլի 2024 թվականին) և Կենտրոն թաղամասի 97 շենքի 18,93 քառակուսի մետր մակերեսով № 65 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ № 18042024-07-0068, տրված՝ 18 ապրիլի 2024 թվականին), անհատույց օտարել գույքերը տիրապետող Միեր Սոսայի Արզումանյանին, (ծնված՝ 20 մարտի 1995 թվականին, անձնագիր՝ 78 15 1251110, տրված՝ 01 հուլիսի 2015 թվականին, Յարոսլավսկի շրջանի ԴՄԾՎ բաժնի № 4 ՏԿ-ի կողմից):
2. Համասեփականատեր ճանաչել՝ Մարինե Սոսայի Գրիգորյանին -քույրը (ծնված՝ 20 սեպտեմբերի 1992 թվականին, անձնագիր՝ 78 14 068660, տրված՝ 21 հունվարի 2015 թվականին, Յարոսլավսկի շրջանի ԴՄԾՎ բաժնի № 4 ՏԿ-ի կողմից):
3. Սահմանել, որ սեփականության իրավունքի գրանցման պահից 10 տարվա ընթացքում գույքն օտարելու դեպքում անհրաժեշտ է Հրազդանի համայնքապետարանի համաձայնությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95/

Լսեցին
ՄԵԼԱՆՅԱ ԿՈԼՅԱՅԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹ-ՏԱՂԱՎԱՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Մելանյա Պետրոսյանի լիազորված անձ Լիդա Ափյանի 2024 թվականի մարտի 15-ի դիմումը.

1.Ուղղակի վաճառքով օտարել Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 31/15 հասցեում գտնվող, Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Մելանյա Կոլյայի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող խանութ-տաղավարի (սեփականության իրավունքի գրանցման վկայական 012879, տրված՝ 1998 թվականի մարտի 23-ին) պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող 38.0քմ մակերեսով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող, բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 260 000 (երկու հարյուր վաթսուն հազար) դրամ կադաստրային արժեքով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96/

Լսեցին

ԱՐՏԱԿ ԱՐԱՄԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Արտակ Վարդանյանի 2024 թվականի ապրիլի 22-ի դիմումը.

1.Ուղղակի վաճառքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 238/18 հասցեում գտնվող, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 237 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Արտակ Արամի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30042024-07-0008, գաղտնաբառ՝ PWTFZSKXZHDX) պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող 18.0քմ մակերեսով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 52 000 (հիսուներկու հազար) դրամ կադաստրային արժեքով: 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97/

Լսեցին

ԱՐԱՅԻԿ ԱՂՎԱՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԵՎ ՀԵՐՄԻՆԵ ՌՈՒԲԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Արայիկ Մինասյանի ու Հերմինե Միքայելյանի 2024 թվականի մայիսի 24-ի դիմումը.

1.Ուղղակի վաճառքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 47/21 հասցեում գտնվող, Երևան քաղաքի Տպագրիչների փողոց 8 շենքի թիվ 46 բնակարանի բնակիչ Արայիկ Աղվանի Մինասյանի և Ծաղկաձոր քաղաքի Օրբելի Եղբայրների նրբանցք 2 շենքի թիվ 13 բնակարանի բնակիչ Հերմինե Ռուբիկի Միքայելյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1494885, տրված՝ 2005 թվականի սեպտեմբերի 23-ին) պահպանման և սպասարկման համար փաստացի օգտագործվող 40.9քմ մակերեսով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող, բնակավայրերի բնակելի

կառուցապատման հողամասը՝ 279 600 (երկու հարյուր յոթանասունինը հազար վեց հարյուր) դրամ կադաստրային արժեքով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98/

Լսեցին
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման N1 հավելվածով.

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 1831-Ն որոշմամբ՝ քարտեզագրման անճշտության հետևանքով, որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված հետևյալ հողամասերը ճանաչել Հրազդան համայնքի սեփականություն. 1)Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամաս 472 հասցեում գտնվող 1420.6քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0123-0028-ից), 2)Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամաս 260/1 հասցեում գտնվող 689.6քմ մակերեսով (ծածկագիր՝ 07-001-0146-0001):
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 3.43992 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 48-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 76-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն և N1920-Ն որոշումներով, 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 44-րդ կետի «ը» ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական

ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ 2024 թվականի մայիսի 27-ի N1/փ-214 դրական եզրակացությունը, 2024 թվականի փետրվարի 23-ի «ԱԳՐՈՀԱՆԴ» ՍՊ ընկերության տնօրեն՝ Մ. Դավթյանի դիմումը և «ԱԳՐՈՀԱՆԴ» ՍՊ ընկերությանը 2021 թվականի հունիսի 24-ին տրամադրված օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/652 թույլտվությունը.

1.Հավանություն տալ Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող, Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 10062021-07-0155, գաղտնաբառ՝ FSYNLRAWXTBJ) Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 3.43992 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսականից փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված՝ բազալտի արդյունահանման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով:
2.Ոչ մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող նպատակային նշանակությունը փոփոխված Հրազդան համայնքի քաղաք Հրազդան 13 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասը՝ 3.43992 հա մակերեսով, 290 000 (երկու հարյուր իննսուն հազար) դրամ տարեկան վարձավճարով, 25 (քսանհինգ) տարի ժամկետով՝ բազալտի արդյունահանման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով:
3.Հանձնարարել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել Հրազդան համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինության քարտեզում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 76-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 44-րդ կետի «ը» ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով 2024 թվականի փետրվարի 23-ի «ԱԳՐՈՀԱՆԴ» ՍՊ ընկերության տնօրեն՝ Մ. Դավթյանի դիմումը և «ԱԳՐՈՀԱՆԴ» ՍՊ ընկերությանը 2021 թվականի հունիսի 24-ին տրամադրված օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/652 թույլտվությունը.

1.Ոչ մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Լանջաղբյուր տեղամաս 1 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասը՝ 2.53257 հա մակերեսով, 210 000 (երկու հարյուր տասը հազար) դրամ տարեկան վարձավճարով, 25 (քսանհինգ) տարի ժամկետով՝ բազալտի արդյունահանման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Աղաբեկ Աշոտի Թովմասյանի 2024 թվականի հունիսի 3-ի դիմումը.

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 74 շենքի թիվ 21 բնակարանի բնակիչ Աղաբեկ Աշոտի Թովմասյանին ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 12032021-07-0101 գաղտնաբառ՝ DQAGXVMHBDP1) Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 8-րդ փողոց 18/2 հասցեում գտնվող 62.6քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասին կից Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16052024-07-0048, գաղտնաբառ՝ NBYHK4JDFQGA) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 8-րդ փողոց 18/3 հասցեում գտնվող 5.3քմ մակերեսով բնակավայրերի նպատակային

նշանակության հասարակական կառուցապատման հողամասը՝ 15 400 (տասնհինգ հազար չորս հարյուր) դրամ կադաստրային արժեքով՝ առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք կառուցելու նպատակով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 481-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով.

1.Ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված, բնակավայրերի նպատակային նշանակության Հրազդան քաղաքի Զորավար Անդրանիկի պողոտա 14/9 հասցեում գտնվող հասարակական կառուցապատման հողամասը՝ 1.4քմ մակերեսով (գովազդային վահանակ տեղադրելու նպատակով), 50 000 (հիսուն հազար) դրամ տարեկան վարձավճարով, 10 (տասը) տարի ժամկետով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով.

1.Աճուրդային կարգով օտարել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2.Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով:
3.Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4.Սույն որոշման գործողության ժամկետը սահմանել 6 (վեց) ամիս:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 215-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 215-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ 6-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի 6-րդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 10-ին ժամը 12:00:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106/

Ավագանու անդամներ՝

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՂԵՎՈՆԴ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը

Հավելված N1
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 10 -ի
N 88 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 7 -ի
N 195 որոշման

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հրազդանի համայնքապետարանի <<Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում>> հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 84

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձի չափը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	<<Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում>> հիմնարկ	Տնօրեն	1	407,000	407,000
2		Գլխ. մասնագետ - տնօրենի օգնական	1	197,000	197,000
3		Գլխավոր հաշվապահ	1	252,000	252,000
4		Հաշվապահ	1	105,000	105,000
5		Մեքենա-մեխանիզմների պատասխանատու	1	315,000	315,000
6		Գլխ. մասնագետ	1	257,000	257,000
7		Մասնագետ	6	165,000	990,000
8		Մեխանիզատոր / հատուկ տեխնիկա/	3	328,000	984,000
9		Մեխանիզատոր / հատուկ տեխնիկա/	1	250,000	250,000
10		Մեխանիզատոր /սեզոնային/	9	130,000	1,170,000
11		Վարորդ /աղբահավաքման/	14	160,000	2,240,000
12		Վարորդ	4	105,000	420,000
13		Ավագ կոյուղագործ	1	295,000	295,000
14		Կոյուղագործ	3	192,000	576,000
15		Բանվոր /աղբահանության/	23	160,000	3,680,000
16		Բանվոր	4	105,000	420,000
17		Բանվոր /ոռոգման/ սեզոնային	3	105,000	315,000
18		Ավտոփականագործ	1	130,000	130,000
19		Ավտոէլեկտրիկ	1	200,000	200,000
20		Պահեստապետ	1	105,000	105,000
21		Պահակ	2	105,000	210,000
22		Շարժիչագործ /մատորիստ/	1	250,000	250,000
23		Էլ. եռակցող	1	150,000	150,000
	Ընդամենը՝		84		13,918,000

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 10-ի
N 88 որոշման

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2016 թվականի հուլիսի 14-ի
N 58 որոշման

Բաղկացած է 4 էջից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ 2

«Հաստատված է»
ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 10 -ի
N 88 որոշմամբ
Համայնքի ղեկավար՝

Ս.Միքայելյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՄԱՔՐՈՒՄ» ՀԻՄՆԱՐԿԻ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ՀՐԱԶԴԱՆ 2024

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» /այսուհետ՝ Հիմնարկ/ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որը ստեղծվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն կանոնադրությամբ:

2.Հիմնարկը ստեղծվել է Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 14-ի N 58 որոշմամբ, նախկին անվանումը՝ «Աղբահանություն և սանմաքրում» հիմնարկ:

3. Հիմնարկի անվանումն է Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկ:

4.Հիմնարկը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հիմնարկի հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, ընթացիկ հաշվարկային հաշիվ: Իր նպատակների իրականացման, աշխատանքային գործունեության մեջ կիրառվող ձևերի և մեթոդների համապատասխան բովանդակության և ֆինանսատնտեսական գործունեության համար Հիմնարկը պատասխանատու է հիմնադրի առջև:

5. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցում է այլ հիմնարկների և կազմակերպությունների հետ՝ համաձայնեցնելով Հրազդանի համայնքապետարանի հետ:

6.Հիմնարկի իրավաբանական հասցեն է՝ ք. Հրազդան, Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1:

2. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.Հիմնարկի գործունեության առարկա և հիմնական նպատակներ են հանդիսանում.
-աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը,
-համայնքի ճանապարհների հարթեցում, բարեկարգում,
-կենտրոնական աղբավայրի շահագործումը,
-Հրազդան համայնքի վարչական տարածքի ճանապարհների և մայթերի մաքրում ձյան շերտից և մերկասառույցից,
-համայնքի սեփականություն հանդիսացող կոյուղու համակարգի սպասարկում և վերանորոգում:
- համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգի սպասարկում և վերանորոգում:

2. Հիմնադիրը թույլ է տալիս Հիմնարկին իրականացնել համայնքային նշանակության ոչ տարանցիկ ճանապարհների սալապատման, խճապատման, երթևեկելի մասի և մայթերի բարեկարգման ձեռնարկատիրական գործունեությունը:

3. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1.Հիմնարկի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը և նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հիմնարկի տնօրենը /այսուհետ՝ Տնօրեն/: Հիմնադրին է պատկանում Հիմնարկի կառավարման և նրա գործունեության վերաբերյալ ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

2.Հիմնարկի Հիմնադրի լիազորություններն են՝

1)Հիմնարկի կառուցվածքի սահմանումը,
2)Հիմնարկի գործունեության կազմակերպման կամ դադարեցման մասին որոշման ընդունումը,
3)Հիմնարկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների ու լրացումների կատարումը:
4) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:
3. Հիմնադիրը Հիմնարկի գործունեության նկատմանբ վերահսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:
4. Հիմնարկի բարձրագույն ղեկավար պաշտոնատար անձը Հիմնարկի տնօրենն է, որի նկատմամբ կարգապահական տույժ է կիրառում, պաշտոնին նշանակում և պաշտոնից ազատում է Հիմնադիրը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5.Հիմնարկի Տնօրենը՝

1)կազմակերպում և ղեկավարում է Հիմնարկի աշխատանքները, ներկայացնում է Հիմնարկը պետական մարմիններում և այլ կազմակերպություններում, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,
2)պատասխանատվություն է կրում Հիմնարկի ամբողջ գործունեության, անհրաժեշտ պայմանների ստեղծման, կադրերի ճիշտ ընտրության, աշխատանքների արդյունավետ կազմակերպման, սանիտարահիգիենիկ վիճակի, կոլեկտիվում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծման համար,
3)Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ տնօրինում է Հիմնարկի գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները),
4)հաշվետու է Հիմնադրին,
5)աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հիմնարկի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ
6)իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը
7)իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
6.Հիմնարկի աշխատակազմը պարտավոր է՝
1)աշխատանքները կատարել բարեխղճորեն և բավարարել համապատասխան աշխատանքների որակը,
2) կատարվող աշխատանքների ընթացքում պահպանել անվտանգության կանոնները:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1.Հիմնարկի աշխատանքային գործունեության հիմնական ֆինանսական միջոցներ են համայնքապետարանի բյուջետային հատկացումները:
2.Հիմնարկի գույքը ձևավորվում է Հիմնադրի կողմից նրա տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնված /ամրացված / գույքից, որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Հիմնադիրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ վերցնել իր կողմից Հիմնարկին

հանձնված գույքը:
3.Հիմնարկն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան օգտագործել, տիրապետել և տնօրինել իրեն հանձնված գույքը:
4.Հիմնարկը պատասխանատվություն է կրում իրեն ամրացված գույքի և միջոցների պահպանման և արդյունավետ օգտագործման համար:
5.Հիմնարկի լուծարման դեպքում նրան ամրացված գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
6. Հիմնարկի լրացուցիչ ֆինանսական աղբյուրներն են՝
-բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,
-Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրելի այլ գործունեությունից ստացված ֆինանսական և նյութական միջոցները:
7.Հիմնարկը սահմանված կարգով հաշվապահական հաշվառում կատարում է ինքնուրույն և հաշվետվություն է ներկայացնում համայնքապետարանի ֆինանսական բաժնին:

5. ՀԻՄՆԱՐԿԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1.Հիմնարկը լուծարվում կամ վերակազմակերպվում է Հրազդան համայնքի ավագանու որոշումներով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 10-ի
N 89 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 7-ի N
196 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 61

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հատիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	<<Մաքուր Հրազդան >> ՀՈԱԿ	Տնօրեն	1	407,000	407,000
2		Հաշվապահ	1	225,000	225,000
3		Առաջատար մասնագետ	1	155,000	155,000
4		Մասնագետ	4	105,000	420,000
5		Պահեստապետ	1	158,000	158,000
6		Էլ. փականագործ	1	105,000	105,000
7		Բանվոր	16	125,000	2,000,000
8		Վարորդ	2	105,000	210,000
9		Վարորդ	2	110,000	220,000
10		Վարորդ	1	200,000	200,000
11		Բարձիչավար	1	221,000	221,000
12		Ծաղկաբույծ	3	105,000	315,000
13		Մաքրուհի	20	125,000	2,500,000
	Ընդամենը		54		7,136,000
1		Բանվոր /այլընտրանքային ծառայող/	7	30,000	
	Ընդամենը		61		7,136,000

Հավելված՝
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 10- ի
N 90 որոշման

Հավելված՝
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 07- ի
N 197 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

Աշխատակիցների թվաքանակը՝ 18

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Ամսական աշխատավարձը
1	2	3	4	5	6
1	Հրազդանի համայնքապետարանի Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկ	Տնօրեն	1	275000	275000
2		Հաշվապահ	0.5	105000	52500
3		Հյուսն	1	173000	173000
4		Հսկիչ	2	105000	210000
5		Մաքրուհի	10	125000	1250000
7		Էլեկտրիկ	1	105000	105000
8		Գիշերային հսկիչ	1	105000	105000
9		Բանվոր	1	125000	125000
Ընդամենը			**17.5**		**2295500**

Հավելված՝
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 10-ի
N 91 որոշման

Հավելված՝
Հրազդան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 07-ի
N 198 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 28

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6
1	ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ,ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	Տնօրեն	1	407000	407000
2		Գլխ. հաշվապահ	1	160000	160000
3		Մասնագետ	2	105000	210000
4		Գործավար	1	105000	105000
5		Հսկիչ	5	105000	525000
6		Վարորդ-մեխանիզատոր	1	147200	147200
7		Վարորդ /ԶԻԼ/	1	160000	160000
8		Բանվոր	13	105000	1365000
9		Մաքրուհի	3	105000	315000
	Ընդամենը		28		3394200

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի հունիսի 10-ի
N 92 որոշման

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2020 թվականի օգոստոսի 14-ի
N 102 որոշման

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Հանձնաժողովի նախագահ՝ Ռոբերտ Դանիելյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
2. Հանձնաժողովի անդամներ.
   1) Գարիկ Հակոբյան - աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
   2) Արմեն Այվազյան - աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետի տեղակալ
   3) Սարո Ղարիբյան- աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասրդության և սոցիալական աջակցության բաժնի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող
   4) Լիլիթ Մուրադյան - աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ
   5) Լիլիթ Եղիազարյան- աշխատակազմի քարտուղարության և անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ
   6) Նարինե Խչոյան - Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ
   7) Թեհմինե Բաղալյան - «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության Հրազդանի ցերեկային կենտրոնի ղեկավար /սոցիալական աշխատող

Սույն փաստաթղթի համաձայն պետական գրանցումը կատարված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից “_____”_____ _____ թ.

Աշխատակից՝

_____ _____

Հավելված 1
Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 10-ի N 94 որոշման

Կազմված է 10.06.2024թ. և բաղկացած է 5 թերթից
Տպագրված է ընդամենը ----- օրինակ
Օրինակ--------

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 10-ի N 94 որոշմամբ

Համայնքի ղեկավար՝ Ս.Միքայելյան

ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ գյուղի Պերճ Բադալյանի անվան մշակույթի տուն համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների «Հրազդանի դրամատիկական թատրոն – մշակութային կենտրոն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը

ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏ

1. «Հրազդանի դրամատիկական թատրոն – մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 85.215.1122577) հանդիսանում է ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ գյուղի Պերճ Բաղալյանի անվան մշակույթի տուն համայնքային ոչ առևտրային կազմակերպության (գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 24.01.2011թ., գրանցման թիվ՝ 85.210.01994 , հարկ վճարողի հաշվառման համար՝ 03019229, գտնվելու վայրի հասցեն՝Կոտայքի մարզ, գյուղ Սոլակ) իրավահաջորդը, որին փոխանցվում են է ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ գյուղի Պերճ Բաղալյանի անվան մշակույթի տուն համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող և սույն փոխանցման ակտում նշված ակտիվները և պասիվները, այլ իրավունքներն ու պարտավորությունները:

2.«Հրազդանի դրամատիկական թատրոն – մշակութային կենտրոն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն են փոխանցվում է է ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ գյուղի Պերճ Բաղալյանի անվան մշակույթի տուն համայնքային ոչ առևտրային կազմակերպության ակտիվները և պասիվները հետևյալ հիմնական հաշվեկշռային ցուցանիշներով (10.06.2024 թ. դրությամբ, մնացորդային արժեք, ՀՀ դրամ).

	ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ գյուղի Պերճ Բաղալյանի անվան մշակույթի տուն			
հ/հ	Հիմնարկի միջոցների անվանումը	Թողարկման / կառուցման/ տարեթիվ	Քանակը	Գինը
1	Մշակույթի տան շենք	1973թ.	1	188436021
2	Նկար	1977թ.	1	2057
3	Նկար	1977թ.	9	967
4	Թատերական աթոռ	1976թ.	177	16552
5	Բեմի առջևի վարագույր	1976թ.	2	0
6	Բեմի կուլիսներ	1976թ.	2	0
7	Կախովի կուլիսներ	1976թ.	4	0
8	Բեմի նկարով վարագույր	1976թ.	1	0
9	«Աշտարակ» տղաների կոմպլեկտ	1982թ.	7	15754
10	«Աշտարակ» աղջիկների կոմպլեկտ	1982թ.	8	19631
11	«Մուշ» աղջիկների կոմպլեկտ	1982թ.	7	14542
12	«Էնգելինա» աղջիկներ	1982թ.	8	19392
13	Աղջիկներ «Ղարաբաղ»	1982թ.	8	26326
14	Տղաների «Բերդ» կոմպլեկտ	1982թ.	7	20071
15	Գրասեղան	1982թ.	2	0
16	Աղբարկղ	1982թ.	1	0
17	Նկար	1982թ.	4	0
18	Նկար	1982թ.	7	0
19	Թատերական աթոռ	2009թ.	200	121921
20	Աշակերտական սեղան (դեղին)	2009թ.	10	44466
21	Աշակերտական աթոռ	2009թ.	24	39013
22	Աշակերտական սեղան (շագանակագույն)	2011թ.	8	35708
23	Աթոռ (կաբինետ)	2009թ.	4	18133
24	Նարդի	2011թ.	3	9914
25	Ժամացույց	2012թ.	2	2541

26	Շիրմա	2014թ.	1	14228
27	Տիկնիկ	2014թ.	15	11488
28	Սեղան արարողություն սրահ	2014թ.	28	218670
29	Մոլբերտ նկարչական տախտակ	2012թ.	8	24238
30	Երաժշտական կենտրոն	2015թ.	1	34562
31	Կավռալիտ	2015թ.	24 մետր	25990
32	Շերտավարագույր	2015թ.	8,421 մ²	20082
33	Կաթսա	2015թ.	2	32041
34	Սկուտեղ	2015թ.	4	4639
35	Տազ ներժից	2015թ.	2	4639
36	Տակդիր	2015թ.	42	6820
37	Աղցանի ափսե	2015թ.	40	5532
38	Մոխրաման	2015թ.	10	2083
39	Դանակ	2015թ.	40	2784
40	Էտաժիրկա	2015թ.	24	26744
41	Դույլ	2015թ.	2	1576
42	Փլավքամ	2015թ.	1	741
43	Տազ	2015թ.	1	741
44	Գազի վառարան	2015թ.	1	33728
45	Պատառաքաղ	1995թ.	216	0
46	Դանակ	1995թ.	194	0
47	Բացիչ	1995թ.	38	0
48	Բաժակ մեծ	1995թ.	198	0
49	Բաժակ փոքր	1995թ.	204	0
50	Ափսե մեծ	1995թ.	240	0
51	Ափսե փոքր	1995թ.	240	0
52	Աղաման	1995թ.	20	0
53	Ափսե պանրի	1995թ.	26	0
54	Շերեփ	1995թ.	1	0
55	Տազ	1995թ.	2	0
56	Քավգիր	2015թ.	1	837
57	Սպասք լվացող մեքենա	2017թ.	1	94089
58	Բիլիարդ	2017թ.	1	144041
59	Գազօջախ	2017թ.	1	0
60	Ափսե	2015թ.	2	1489
61	Աղբի աման	2015թ.	2	681
62	Դաշնամուր	2015թ.	2	0
63	Գորգի դազգահ	2015թ.	1	0
64	Տաղավար	2016թ.	1	137861
65	Լվացարան սրահի	2019թ.	1	27104
66	Օդորակիչ	2019թ.	1	40500
67	Ծաղկաման	2019թ.	4	4048
68	Սեղանի ծածկահարթ ստալիչնիցա	2019թ.	2	48012
69	Երկհարկանի սեղան	2019թ.	3	45070
70	Աղաման	2019թ.	26	2013
71	Սեղան	2019թ.	2	30976
72	Բացիչ	2019թ.	15	929
73	Բալգարկի Powertec PT 4071200W	2021թ.	1	34000
74	Պատի ցուցանակ	2021թ.	1	15000
75	Գեյզեր ծորակ	2021թ.	1	22000

76	Տպիչ	2021թ.	1	25000
77	Համակարգիչ	2021թ.	1	50000
78	Հատակի մաքրման մեխանիզմ	2021թ.	1	15000
79	Ջերմաչափ	2020թ.	2	26000
80	Հայելի զուգարանի	2021թ.	2	7000
81	Զուգարանակոնք	2021թ.	2	59000
82	Տեսախցիկ	2021թ.	1	70000
83	Աթոռ	2021թ.	6	41500
84	Լվացարան զուգարանի	2021թ.	2	38000
85	Բաժակ մեծ	2021թ.	36	5400
86	Գազի վառարան	2021թ.	1	30000
87	Բարձրախոս SRM 450	2021թ.	2	530000
88	Խոսափող SM58	2021թ.	1	40000
89	Կառավարման վահանակ Xenyx 1002FX	2021թ.	1	45000
90	Եռոտանի տակդիր	2021թ.	1	15000
91	Միացման լար 10մ	2021թ.	2	14000
92	Միացման լար 5մ	2021թ.	2	11000
93	Դինամիկի տակդիր	2021թ.	2	70000
94	Հրշեջ վահանակ զույքով	2022թ.	1	36000
95	Տարհանման սխեմաներ	2022թ.	1	30000
96	Կրակմարիչ	2022թ.	6	60000
97	Բաց կապույտ ծաղիկներով զգեստ	1994թ.	1	0
98	Կրեմագույն տարազ	1994թ.	1	0
99	Մոխրագույն զգեստ վարդագույն ծաղիկներով	1994թ.	1	0
100	Արծաթագույն երկար,ոսկեգույն նախշով	1994թ.	3	0
101	Մուգ կարմիր թիկնոց թևորը երկար	1994թ.	6	0
102	Մուգ կարմիր,կարճ կիսաշրջազգեստ	1994թ.	5	0
103	Մուգ կարմիր գլխարկ	1994թ.	8	0
104	Կարմիր գույնի տարազ, կապույտ գոտիով	1994թ.	4	0
105	Կարմիր տարազ առանց կապույտ գոտի	1994թ.	1	0
106	Սպիտակ կիսաշրջազգեստ բարակ գոտիով	1994թ.	3	0
107	Սպիտակ վերնաշապիկ	1994թ.	5	0
108	Վերնաշապիկ դեղին	1994թ.	1	0
109	Գծավոր սև գույնի վերնաշապիկ	1994թ.	3	0
110	Բաց կանաչ վերնաշապիկ	1994թ.	3	0
111	Մանուշակագույն ժիլետ	1994թ.	7	0
112	Կապույտ շալվար կողքերը թելեր	1994թ.	4	0
113	Շագանակագույն յուբկա	1994թ.	2	0
114	Շագանակագույն ժիլետ	1994թ.	6	0
115	Վերարկու շագանակագույն	1994թ.	1	0
116	Վարդագույն շոր,թևերին ծյուլ	1994թ.	1	0
117	Կարմիր ռուսական վերնաշապիկ	1994թ.	7	0
118	Սպիտակ վերնաշապիկ	1994թ.	1	0
119	Աղջկա կարճ պոդյուբկա	1994թ.	1	0
120	Վերնաշապիկ գունավոր ծաղիկներով	1994թ.	1	0
121	Մուգ կանաչ գույնի ժիլետ	1994թ.	3	0
122	Կանաչ ժիլետ սև շալվարով	1994թ.	1	0
123	Սև տարազ շալվար	1994թ.	1	0
124	Ժիլետ սև ծաղիկներով	1994թ.	1	0
125	Սպիտակ կարմիր եզրերով ժիլետ	1994թ.	8	0

126	Դեղին գույնի վերնաշապիկ	1994թ.	8	0
127	Դեղին գույնի վերնաշապիկ	1994թ.	2	0
128	Բաց վարդագույն վերնաշապիկ	1994թ.	4	0
129	Փայլուն վերնաշապիկ կապույտ	1994թ.	2	0
130	Գոտի կլոր շեղ նախշերով	1994թ.	2	0
131	Կապույտ ռուսական տարազ	1994թ.	9	0
